ՈՒՂԵՑՈՒՅՑ
«ԱՐՎԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ»
ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

«Արվեստագիտական հանդեսը» լույս է տեսնում տարին երկու անգամ: Հոդվածները գրախոսվում են համապատասխան մասնագետների կողմից:

Հրատարակման ենթակա հոդվածների շարվածքը պետք է լինի Unicode-ով՝ GHEA Grapalat տառատեսակով, տառաչափը՝ 12, միջտողային հեռավորությունը՝ 1.5, թղթի ֆորմատը՝ A4: Նկարները, նոտային օրինակները և աղյուսակները պետք է զետեղված լինեն տեքստում: Հոդվածները ներկայացնել հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Հոդվածները պետք է ունենան ամփոփումներ (50-60 բառի սահմաններում) և բանալի բառեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով:

Հոդվածի սկզբում գրել վերնագիրը՝ մեծատառերով, հաջորդ տողում՝ հեղինակի անունը, ազգանունը և հայրանունը՝ մեծատառերով:

Հոդվածին կցել հոդվածի վերնագիրը և հեղինակի (հեղինակների) անուն, ազգանուն, հայրանունը՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով, հեղինակի (հեղինակների) տվյալները՝ գիտական աստիճանը, գիտական կոչումը, պաշտոնը, աշխատանքի վայրը, հեռախոսահամարը (համարները), էլեկտրոնային փոստի հասցեն: